

ԿՐՕՆԱԿԱՆ—ԲԱՐՈՅԱԿԱՆ

ԳՈՂԳՈԹԱՅԻ ԱՆՄԵՂ ԶՈՀԸ

ԻՆԶՈՒԻ ԱՐԴԱՐԸ ԿԸ ՏՍՈՒԱՊԻ

«Զվիշտս մեր կրեաց նա»

Ես. 53. 4.

Յիսուսի ժամանակ, Պաղեստինի մէջ, Գողգոթայի բարձունքն էր այն տխուր վայրը, որի վրայ կը խաչուէին օրուան մեծ ոճրագործները: Առաջին ակնարկով այդ լեռը կը պարզէ մեր առջև մի սրտառուչ տեսարան, որտեղ կը ներկայանան մեզ երեք մեղապարտ խաչեալներ: Առաջին երկուսը ծանօթ ոճրագործներ, իսկ միւսը, Նազովրեցի մի պատանի: Երեքն էլ միևնոյն օր, միևնոյն բարձունքին վրայ, միևնոյն ձևով, միևնոյն պատիժը կը կրեն: Բայց և այնպէս ահագին տարբերութիւն կայ նոցա մէջ:

Նրանցից երկուսն արժանի են պատժուելու, որովհետեւ չարութիւն են արել մարդկանց: Իսկ երրորդը՝ Նազովրեցին, ինչ ունի արած մարդկութեան, Իբրեւ աւագակնոքա, հաւանական էր, մարդոց աչքերը կուրացրել են, ձեռքերը կոտրել և կամ ոտքերը կաղ դարձրել, բայց նա կոյրերին աչք, ձեռքերը զօսացածներին բժշկութիւն և կաղերին քայլեր պարգևել է: Միւս խաչեալները յանցաւոր են նորա համար, որ նրանց ամբողջ կեանքը հասարակութեան չարիք է հասցրել պարզապէս, սակայն Յիսուսի կեանքը օրհնութեան մի միջոց է եղել մարդկութեան: Նոքա մեղաւոր են բառիս լայն ստմամբ, իսկ Գողգոթայի դիւցազնը երբէք մեղքի տպաւորութիւն չէ կրում իր գիտակցութեան մէջ: Նա է մէկը, որի ականջները փակուած են միշտ լպիրշ խօսակցութիւնների հանդէպ, աչքերը աղ-

տոտ տեսարանների չեն նայած, բերանը չար խօսքեր չէ արտասանած, ձեռքերը հեռու պահուած են անիրաւութեան արարքներէ, և ոտքերը չեն մղած զինքը յաճախելու այնպիսի տեղեր, ուր անմաքրութիւն և անպահանջութիւն կը տիրապետին: Նա չունի խղճի տառապանք. մաքուր են նորա խորհրդածութիւնները, նա բշտած չէ երբէք չար զգացումների վայրկենական հոսանքներից, և ոչ էլ խարդախութիւն ու նենգութիւն գտնուած է մարդոց հետ վարուելակերպի մէջ: Մի խօսքով՝ նա ապրել է մի կեանք, որ հերկայացրել է Աստուծոյ կեանքի տիպար պատկերը:

Եթէ այդպէս է, ինչո՞ւ ուրեմն կը տառապի արդար նազովրեցիկն, ինչո՞ւ կը խաչուի անմեղ Յիսուսը եղեռնապատ տնձերի հետ: Այս բարոյախմաստասիրական մի կարեւոր հարց է, որ դարեր առաջ Իսրայէլի սաղմոսերգուի միտքն էլ զբաղեցրել է. Յոր իր բարեկամների հետ երկար վիճաբանութիւններ անելով, կաշխատի այս խնդիրը լուծել: Մարդ ինքնագիտակցութեան նկատ օրից սկսած, արդէն իր բնութեան խորքից բողբոջի բուռն ազդակներ է արձակում միշտ, երբ տեսել է, որ կը չարչարուի արդար:

Ինչո՞ւ կը տառապի արդարը. պատասխանը շատ պարզ է սակայն: Տիպար մայրը կը տառապի իւր գաւաղի համար: Երբ մանուկը հիւանդանայ, մայրն է որ նորա բարեկաւութեան համար կը գոհէ իր անձնական հանգստութիւնը, իր քունը, և ուրախութեան ամբողջ ժամերը, նա կը տառապի ցաւերով, որոնք կը պատկանին իւր գաւաղին: Ժշմարիտ հայրենասէրը դուրս կը գայ իւր գձուձ ետից և կը նոյնացնի իր բազը իր հայրենիքի բազդի հետ, և որով իր վրայ կը կրէ իր հայրենեաց վիշտերը, ցաւերը, վէրքերը: Այլ խօսքով՝ նա կը տառապի իր հայրենիքի համար, և դորա համար կը գոհէ իր վառքը, իր պատեհութիւնները, քանի որ իր հայրենեաց ցաւերը իր ցաւերն են: Ժիշդ միևնոյն սկզբունքով անմեղ նազովրեցիկն կը տառապի Գողգոթայի խաչի վրայ: Նա իրրև տիպար մարդասէր նոյնացրել է իր բազդը մարդկութեան բազդի հետ: Ինքը գերծ է ցաւերից. բայց

ընկերութեան ցաւերը իր ցաւերը կը կազմեն: Ինքը աղատ է մեղքից, սակայն մարդկութեան մեղքերը իր մեղքերն են եղած:

Ինչո՞ւ տիպար մայրը կը զոհուի իր զաւակի համար, ինչո՞ւ ճշմարիտ հայրենասէրը կը նուիրուի իր հայրենիքի համար, սիրոյ բնոյթն է այդ: Նոյն ճշմարիտ և անկեղծ սէրը, բառիս լաւագոյն իմաստով, Յիսուսի կեանքի մէջ էլ իշայտ կը գայ Գողգոթայի բարձունքի վրայ:

Ուրիշ խօսքով, արդարը կը տառապի, որովհետեւ նա չէ ապրում լոկ իր անձի համար, այլ կապրի յօգուտ իր նմաններէ: Նա պաշտպան կը կանգնի արդարութեան դատին, ախոյեան կը հանդիսանայ ճշմարտութեան և շատադուր սիրոյ սգկրօններէ: Եւ այն է պատճառը, որ հին ուխտի արդարագատ մարգարէն, Թեղբացի Եղիան կը անուառի, երբ տեսնում է արդարութեան ծաղրուելը: Սոկրատը թունալից բաժակ կը խմէ, Մկրտիչ Յովհաննէս իր երկտասարդ հասակում մահուան կը դատապարտուի, Ստեփաննոս կը քարկոծուի աւանդապաշտ և մոլեռանդ բազմութեան աղաղակներէ մէջ:

Բայց արդարի այս տառապանքը, սակայն ազատութեան, փրկութեան ճանապարհ կը բանայ ամեն տեղ, փռքելով ընկերական չարիքների, մոլութիւնների, նախապաշարումների դարաւոր կտպանքները: Յիսուսի տառապանքը փրկութեան կտտարեալ ճանապարհը հարթեց մարդկութեան առջև. մինչև հիմայ որքան հազարաւոր մարդիկ, քսան դարերից ի վեր դիտելով Գողգոթայի խաչի վրայ զոհուող անմեղ Յիսուսի կեանքը, ներշնչուեցան Նորանից և մոռանալով իրենց վատթար կեանքը՝ հետեւեցան Նորա փրկարար հետքերին: Եւ զարմանալի է, որ այսօր քսաներորդ դարի մարդիկ էլ կը գրաւուին ու կը ներշնչուին Իրենով: Քանի որ նա իրեն համար չապրեց այս աշխարհի մէջ, այլ ապրեց մարդկութեան փրկութեան համար:

Գր. Սարաճեան

Ս. Էջմիածին